չափ էլ դժբաղդաբար անկարելի է որ հայ քարոզիչը, հայ հանրախօսը, հայ խմբագիրը մի զգալի ազդեցութիւն կարողանայ ունենալ այնպիսի դէպքերում, երբ կատարվում է ժողովրդի տնտեսական և բարոյական ճգնաժամ։ Ապացոյցի համար թող հանդէս դուրս գայ մի հայ լրագիր, հին թէ նոր, և հաշվէ խմբագրի հինգ մատների վրա այն նշանաւոր գործերը, որ կատարվել են ժողովրդի կեանքում, օգուտ քաղելով լրագրի մէջ յայտնած մտքերից։ Ոչ մի հայ լրագիր դժբաղտաբէս չէ կարող պարծենալ այդպիսի յաղթութիւններով, որ եւրոպական իւրաքանչիւր լրագրի համար բնական և անհրաժեշտ պայման է համարվում։ Եւ դորա պատճառը այն է որ եւրոպացին մի արդիւնաբեր գործ սկսելու համար, կարիք չունէ արհեստական կերպով իր երակները գրգռելու, մինչդեռ հայը առանց այդ կօնֆօրդատիվի ապրել և շնչել չէ կարող։

Ահա այն ցաւալի պատճառը, որով լրագրութիւնը հայոց մէջ չէ հասնում իր իսկական նպատակին, չէ կարողանում կատարել իր իսկական կոչումը, հանդիսանալ ժողովրդի պրոգրէսի համար մի անհրաժեշտ գոյութեան պայման, այլ նա կատարում է մի զուարճախօսի, մի հեքեաթ ասողի, մի թուղթակի, մի կաչաղակի, մի պառաւի պաշտօն։ Մինչդեռ որչափ է կորցնում ժողովուրդը իր այդպէս վերաբերութեամբ դէպի լրագիրը՝ մենք կապացուցանենք հետևեալ անգամ մէջ բերելով այն շատ հարցերից մինը, որ յարուցվել են անդադար «Մշակի» յօդուածներում, բայց թողվել զանցառութեան մէջ։ Այդ հարցը կը լինի և մեր այսչափ խօսակցութեան գլխաւոր նպատակը։

Դր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

12 յունվարի

Զանկեազուրի գաւառն գոյանում է մօտ 17—18 հազար ծխից կամ թէ մօտ 300—350 գիւղից։ Գաւառի մեծ մասը հայեր են։ Զանկեազուրը քաղաք չունի, բայց ունի երկու հաշտարար դատաւոր և մէկ գաւառապետ։ Այս վերջինի ու մէկ հաշտարար դատաւորի նստարանը իրանց կառավարութիւններով ու ատիճանաւորներով լինում է Գէօրիս գիւղում։ Այս գիւղը Շուշից հեռու է 58 վերստ։ Շուշից դեռ չը հասած Գէօրիս, երբ մնում է 13 վերստ, դուք պիտի անցնէք Ցեղ անուն գիւղով, որ ունի մօտ 400 տուն հայեր։ Ցիշեալ տեղումը կան երեք քահանայ, (չորրորդը վախճանվել է անցեալ տարին) և մէկ չափազանց հին քարաշէն եկեղեցի։

Անցեալ դեկտեմբեր ամսի 25-ին, երեքշաբթի, ես անց էի կենում Ցեղով դէպի Գէօրիս։ Այստեղ (այսինքն Ցեղումը) ինձ հաղորդեցին որ տեղական եկեղեցին քանի ժամանակ փակած է և քահանայքը ոչինչ եկեղեցական արարողութիւններ չեն կատարում. մէկ ննջեցեալ, ասացին, անա քանի օր է վեր ընկած իրանց տանը և, չը նայելով հանգուցեալի ծնողաց աղաչանք—պաղատանքին, քահանայքը չեն ուզում թաղել։ Միւս օրը ես եկայ Գէօրիս ու մնացի գաւառապետ պ. Կարայօվի մօտը։ Այդ բանը պատմեցի նրան, բայց նա մանաւորապէս չը հաւատալով այդպիսի անկարելի բանին, խնդրեց ինձ յետ դառնալու ժամանակ ստոյգն իմանալ ու գրել իրան։ Հանգամանքը փոխվեց այնպէս որ պ. Կարայօվը ինքը երես առ երես իմացաւ Ցեղումը ասածիս ճշմարտութիւնը։ Երեկոյեան 10 ժամն էր, երբ ես և պ. Կարայօվը իր հրաւիրված քանի մի հիւրերի հետ ժամանակ էինք անցկացնում, տանտէրը յանկարծ ստացաւ Ելիսաւետպոլի Նահանգապետից հեռագիր, կարդաց ու գլուխը դրաւ սեղանի վրա և սկսեց լալ։ «Ի՞նչ է, Անտոն Եակովլէվիչ, հարցրի ես, դա ինչ հեռագիր է որ ծիծաղով երեսդ մէկ բոպէյում թրջեց արտասունքով։» „Հայրս վախճանվել է Թիֆլիսում, Նահանգապետը հրաւիրում է ինձ Թիֆլիս։ Ես էս բոպէիս ճանապարհ կընկնեմ։» Եղանակը սաստիկ ցուրտ, ձիւնը էլ աչքինապափ կուտած, ցուրտ քամին փչում, էլ գիշեր, մութը, անասելի վատ ճանապարհներ—այս բոլոր հանգամանքները համոզեցին պ. Կարայօվին մնալ մինչև առաւօտը։ Վաղը միասին եկանք Ցեղ։ Պ. Կարայօվը, չը նայելով իր գործի վտանգութեան, պահանջեց տանուտէրին և մանրամասն հարցրեց եկեղեցու փակ լինելու մասին։ Տանուտէրը հաստատեց բանի ճշմարտութիւնը։ Գաւառապետը գոյն-գոյն փոխվելով այդ սարսափելի գործողութենից հոգևոր կառավարութեան կողմից, հրաւիրեց տեղական աւագ քահանային։ Այս վերջինը դաւառապետի հարցին պատասխանեց, որ իսկ եկեղեցու դռները քանի ժամանակ է կապած, քահանաների փիլոնները վեր առած և ոչինչ եկեղեցական կանոնադրութիւններ չէ կատարվում, համաձայն գործակալի հրամանին։

—Երբվանից է կապած, հարցրեց պ. Կարայօվը զարմացած կերպով։

—Նոյեմբերի 4-ից, այսինքն անա մէկ ամիս 22 օր է, պատասխանեց քահանան։

—Ի՞նչ էք ասում, տէր-տէր, գժվել էք, ինչ է. չէ, ես, ներեցէք, ձեզ էլ չեմ հաւատում, այդպէս բան չի լինի։ Գործակալը այդքան ընդարձակ իրաւունքներ չունի։

Այդ միջոցին մօտեցաւ դաւառապետին մի խեղճ մարդ Հայրապետ Յովսէփեան անունով, գլխարկը վեր առած, աչքերը արտասունքով լվքը և բաւականին դողալով դանդատվեց դաւառապետին, որ քանի օր առաջ նրա եղբայր Աղաբէկն վախճանվել էր. դա ինչքան աղաչեց եղբօր թաղման համար, քահանաները ուշ չը դարձրին, բայց երբ 5 մինթ. տուաւ քահանաների, այն ժամանակը նրանք մուռացան գործակալի հրամանը և ամենայն իշխանութիւն։ Այժմ էլ միւս եղբայրն է վախճանել (Սարգիսը) և անա 6 օր է դիակը տանը վեր ընկած, առաւօտից մինչի իրիկուն տունը լացով-շիվանով լվքն, բայց անխղճմտանք քահանաները չեն ուզում թաղել առանց 5 մինթի, ինքն էլ ոչինչ չունի, բաւականին տնանկ է։ «Աղաչում եմ, պաղատում եմ, աղա, ջանս ջկարս քըմատաղ, իմ հար իմ մար քըմատաղ, մին թարզ արա աղբերս թաղենս, ասեց պ. Կարայօվին Հայրապետ Յովսէփեանը, դեռի պէս թափելով աչքերից արտասունքը։

Այդ խօսքերից յետոյ պէտք էր նայած պ. Կարայօվի դէմքին թէ ինչ փոփոխութիւններ էր ցոյց տալիս։ Նա կարծես իսկոյն մոռացաւ հօր վախճանը։ Ոչինչ չը խօսալով սկսեց դէսուդէն մտնել, ձև ցոյց տալով որ նա սարսափելի բան է լսել։ Վերջի ի վերջոյ դուրս եկաւ, որ Ցեղցիք 1879 թի վանքական հարկը-պտուղը (ցորեն) դեռ չեն տուել, ցորենի գումարն է 25 սոմար (50 պուդ) և այդ ցորենն էլ պիտի հանի չուչեցի Արտէմ մահտէսի-Օվանէսեանցին, չը գիտեմ ինչ պատճառով։ Ցանուտէրը և քանի մի գիւղացիներ մարդիկ մօտեցան Կարայօվին և յայտնեցին որ նա, ինչպէս տեղական գաւառապետ, քաջ գիտէ որ 1879 թուում նրանց արտերը բոլորովին փչացած են մինից և իրանք էլ այնքան սոված են որ գիւղացոց համարեա կէսը ցրուած է դէպի Շուչու գաւառն և միւս տեղեր, որտեղ կերակրվելու յոյս կայ։ «Ուրեմն որտեղից տանք այդ ցորենը՝ երբ չունենք և մինթ հոգևոր կառավարութիւնը չէ կարող համբերել մինչև եկող տարին, մինթ կարելի է ժողովուրդին էդպէս նեղացնել և 25 սոմար ցորենի համար եկեղեցու դռները կապել ամիսներով։ Եկեղեցին բաց ժամանակն էլ սիր տէր-տէրներից քահանայութիւն չենք տեսնում, ասացին գիւղացիք. մեր եկեղեցում ամիսներով պատարագ չէ լինում, եթէ ժամահաց չը կայ։»

—Աղա, իրանք էլ վատ ժողովուրդ են, պատասխանեց քահանան, ժամ չեն գալիս, պատարագը ում համար անենք։

—Բա ինչ պարպէն է տէր-տէր, ասաց բարկութեամբ պ. Կարայօվը, դու քո պարտաւորութիւնդ կատարէ—պատարագդ մատուցիր. բայց թէ ժողովուրդը իր պարտքը չէ կատարում—եկեղեցի չէ գալիս, դա քեզ չէ ազատում քո սեպհական պարտաւորութենից. ամենայն մարդ իր տեղն է պատասխանատու, ուր հարկը կը պահանջէ։ Ես ինքս առաւօտից մինչև էկս օրվայ երկու ժամը սպասում եմ դատարանումը դանգատաւորի, իսկ եթէ երկու—երեք օր դանգատաւոր չէ գալի ինձ մօտ, միթէ դա նշանակում է որ ես միշտ ազատ եմ դատաստանատուն գնալուց։ Վերջապէս ես հարկաւոր եմ համարում նկատել, որ ժողովրդի ժամ չը գալը ձեր—տէրտէրներիդ պակասութենից է։ Եթէ քահանան կարգին քահանայ լինի, եթէ եկեղեցու ժամասացութիւնը ու միւս կանոնադրութիւնները կարգին լինեն, հաւատացէք որ ժողովուրդը ուրախութեամբ կը գնայ ժամ, եթէ չէ, ժողովուրդի հետ այդպէս կը վարվէք ինչպէս այժմս, էն ժամանակը յայտնի բան է չէ կարելի պահանջել ժողովրդի կողմից ոչ թէ ժամ գնալ, այլ քրիստոնէութիւն էլ.... Ինքս կաթոլիկ եմ, հայոց մէջ մեծացած, մօտ յիսուն տարեկան մարդ եմ, բայց կեանքումս այդպէս բան, այսինքն 400 մարդու եկեղեցու դռները կապել 25 սոմար ցորենի համար, ոչ տեսել եմ, ոչ լսել։ Բացի դմանէ դուք պարտ էք չաբաթը երկու պատարագ անպատճառ մատուցանել։ Ես հաստատ աղբիւրից գիտեմ որ Թիֆլիսցի քահանաները ամենայն չաբաթ ու կիրակի պատարագ են մատուցանում։» Էդ քարոզից յետոյ պ. Կարայօվը խնդրեց տէր-տէրին ցոյց տալ այն հրամանը, որը տուած է եկեղեցին կապելու համար։ Տէր-տէրը պատասխանեց որ հրամանը տէր-Ղազարի մօտ է և նա էլ երրորդ քահանայի հետ միասին ճաչատեղն են։ Հրաւիրեց յիշեալ քահանաների։ Գնացող մարդը եկաւ յայտնեց դաւառապետին, թէ քահանաները չեն ուզում գալ։ Պ. Կարայօվն էլ աւելի բարկանալով ինքը ճանապարհվեց դէպի նրանց։ Ճաչատանը մօտենալու ժամանակ տեսանք, որ քահանայից մէկը տունից դուրս եկաւ գաւառապետի առաջը։ Ձեռները գրպանումը դրած ու գոյնը բաւականին կարմրած էր քացախ գինու զօրութենից, գլխին կար մի ահագին աշխարհականի գլխարկ, որից եւրոպացին անչուշտ կը վախենար արխալուղը կեղտոտ, մազերը ցրուած էին այդպէս որ կարծես ամբողջ տարի դրա գլուխը սանդրի երես տեսած չը լինէր։ Մօտենալով դէպի այդ Բախուսի ուխտաւորը, պ. Կարայօվը պահանջեց գործակալի հրամանը և ստանալուց յետոյ, տուաւ ինձ խնդրեց կարդալ բարձրաձայն, որ բոլոր ժողովուրդը լսէ։ Հրամանը չափազանց անդրագէտ էր գրված։ Աւելորդ եմ համարում պատճէնը ներկայացնել։

Պարոն Կարայօվը հրամայեց բաց անել եկեղեցին, բայց արդեօք կը կատարեն նրա հրամանը, դա մի հարց է։

Ղանապարհորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ այնտեղ սաստիկ ցրտեր են անում. Տղայոց ուսումնարանում նոր են սկսել վառել։ Թատրոնասէրները մի հաղորդված լուր, որ վերաբերում էր Հայաստանի ինքնավարութեան հարցին, ընդունելով իբր մի անհերքելի ճշմարտութիւն, բացականչում ենք ուրախութեամբ՝—կեցցէ Պապիկ իշխանը, որ 350 քաջամարտիկ վալանթեօրներով այնքան դիմադրեց (թող օգնող չը լինի նրան) մինչև հայ գայմագամ նշանակել տուեց Զէյթունի վրա. Նա զէնքով աւելի բան հոգաց, քան մնացեալ երեք միլիոն ազգը իր անթիւ թոյլ բողոքներով այս կամ այն հարբատահարութեան դէմ, կամ՝ կեցցէ Հայրիկը (Ար. Խրիմեան) որ 200 մուշաներով պտի գայ Հայաստան քիւրդերու գլուխը ջարդելու։—կեցցէ Ար. Ներսէս, ինչ լաւ է խօսացել էյ, Աստուած երկար կեանք տայ նրան, շատ լաւ է վարում իր պաշտօնը։—Շատ ապրին մեր պօլսեցի երիտասարդները, ինչ երևելի դէմոնստրացիա են արել է (մշեցոց արախչիների նման գլխարկներ են ծածկել), ինչ եռանդով են փող հաւաքում զանազան ընկերութիւնների համար, կեցցին, ճշմարիտ։—Եւ որքան սրանց նման բացականչութիւններ դուրս են թռչում մեր բերանից ամեն օր, ամեն ժամ և ամեն բոպէ։ Եթէ մենք գործնականապէս նպաստում ենք մեր ազգի վերածնելութեան սուրբ նպատակին,—այդ մեր նուիրատուութիւններ հաւաքելու միակ միջոցն է, որ ամբողջ տարիներով հաւաքում ենք մի քանի հազար բուբլի և նուիրում ենք այս կամ այն ընկերութեանը. և յետոյ մէկ, մէկ հերոսների նման քթներս երկինք անկած, խղճով հանգիստ, իբր թէ ազգային պարտականութիւնը արժանաւոր կերպիւ կատարած պրծած լինէնք և գոհ բոլորովին, որ ունէնք ազգի համար գործողներ, գիտաւոր ասողների նման երևացող, մի քանի անձնանուէր անհատներ,—ձեռքներս կուրծքներիս վրա ծալած, սպասում ենք անտարբերութեամբ մինչև ընկերութիւնների հիմնած նախակրթարանները ստեղծագործեն կենդանի և ազատասէր նոր սերունդ (և), որին վիճակված է իրագործել «Հայաստանի ինքնավարութեան խնդիրը»,—այսինքն մինչև «վերջին հայը գնի դաղար գերեզմանի մէջ», ինչպէս բացականչեց մահամերձ դրութեան մէջ Ղանմահ Սա. Նազարեանցը։

Մի նայեցէք, ի սէր Աստուծոյ, թէ ինչ են անում մեր հարուստները հայրենեաց այս վերածնելութեան միջոցին։ Ազգը, որ հիմա ամենից աւելի կարօտ է ծանրակշիռ նիւթական օժանդակութեան, դարձեալ հանդիպում է մեր հարուստների բերանը ամրասղնված քսակներին և շատ դժուարութեամբ կարողանում է դուրս բերել այնտեղից արծաթ։ Այս օժանդակութիւնը նման չէ մի հայրենասէր իշխանի կամ հարուստի գոհ սրտով տուած առատաձեռն նուիրատուութեան և ընդունողի վեհանձնաբար ընդունելութեան, ընդունած արծաթի ազգօգուտ նպատակի գործադրութեան պատճառաւ, այլ սա աւելի նման է մի ողորմացողի և մուրացողի ստոր և զզուելի տեսարանին։ Հայաստան կարող է խսպառ կործանվել, նրա անունը կարող է բոլորովին ընջինջ լինել աշխարհի երեսից, Հայաստան կարող է նորից վերականգնել,—դա ինչ փոյթ հայի հարուստին։ (Բացառութիւններ կարող են լինել մի քանի հատ, դա մի հակասական փաստ չէ կարող լինել մեր ասածների դէմ։) Նրա համար չը կայ հայրենիք, նրա իսկական հայրենիքը՝ իր քսակն է, նրա Հայաստանը՝ իր դրամարկղը։ Մնացեալ հայրենիքները երկրորդական, մինչև անգամ աւելորդ հայրենիք են նրա համար։ Հայի հարուստը միայն այն ժամանակ կարող է ձեռք քաշել իր հարստութիւնից, երբ հաստատապէս համոզվի, որ էլ անկարող է օգտվել իր հարստութիւնից։ Սա հարիւր անգամ ասվել, խօսվել և հաստատուել է փորձերով։ Իդէալական բարձր ձգտումներ, հայրենասիրական վեհ զգացմունք, անձնազոհութեան սուրբ գաղափար, ազգային պարտաճանաչութիւն, հասարակական պահանջ,—երևի սրանք դեռ ևս շատ բարձր են մեր հարուստների հասկացողութեան մակերևոյթից։ Եւ ի՞նչ.... բաւական չէ, որ հարուստ հայը ինքը չէ օգնում, չէ մասնակցում, չէ տալիս կամ ակամայ է չպատում ազգի յառաջ իր արծաթը,—ազգային կամ հասարակական գործողների վրա էլ, որոնցից շատերը, իրանց ժամանակը, առողջութիւնը, արծաթը և վերջապէս ապագան զոհում են ընդհանրութեան օգտին, նայում են որպէս «խելագուրկների» վրա։ Սրանք պիտի նպաստեն ազգին վերականգնել մի կործանված հայրենիք։

Վերջապէս ի՞նչ արեց կամ ի՞նչ է անում ազգի վերականգման համար Ս. Էջմիածինը, ազգի այդ միակ յենարանը։ Մարդ կարմրում է անգամ ասելիս՝ «ոչինչ։»—«Ոչի՞նչ» պիտի բացականչէ ամեն հայ մի առանձին զարմանքով։ «Ոչի՞նչ....» պիտի հառաչէ ժամանակակից կամ յետագայ խեղճ հայ պատմագիրը և մազերը բիզ-բիզ կանգնեն գլխի վրա։ Հայրենասիրական զգացմունքը պիտի լցնէ նրա սիրտը արիւնով, պիտի վրդովէ հոգին, և՛ զայրոյթի, և՛ արդարացի սրամտութեան տպաւորութեան ներքոյ՝ պիտի չարժէ անդադար գրիչը նկարագրելով Ս. Էջմիածնայ այդ մեծ և աննկարելի քաղաքական սխալը....

* * *

ները յունվարի 20-ին մի ներկայացումն են տուել։ Հոգևոր ուսումնարանի հոգաբարձուներից մէկը ընդդէմ է եղել այն մտքին, որ ներկայացումը մասնաւոր մարդու դահլիճի մէջ լինի, մինչդեռ Հին-Նախիջևանում ոչ առանձին թատրոնական դահլիճ կայ և ոչ ուսումնարանը յարմար տեղ ունի։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ. «Յունվարի 7-ին հայ թատրոնասէրների խումբը թատրոնական դահլիճում ներկայացրեց տաղանդաւոր պ. Գ. Սունդուկեանի հեղինակած «Քանդած Օջախ» պիեսան։ Ամենուրեմ այդ գեղեցիկ պիեսայի մասին խօսել, քանի որ նա ամենքին յայտնի է։ Խաղը շատ լաւ էր, բոլոր խաղացողները հիանալի կատարեցին իրանց դերերը։ Հասարակութիւնը ոգևորված էր թէ պիեսայի բովանդակութիւնից և թէ գեղեցիկ խաղից։ Պէտք է չնորհակալութիւն յայտնել Քալեան օրիորդներին և տ. տ. Մադաթեանին և Սարգսեանին։ Թատրոնասէրների մէջ կան այնպիսի անձինք, որոնք հասարակ աշխատողներ են և իրանց մասնաւոր պարապմունքից շատ քիչ վարձատրված։ Վատ չէր լինի եթէ դրանցից իւրաքանչիւրի օգտին մի մի ներկայացում տրվէր։ Այդ պարոնները շատ են աշխատում թատրոնական գործի համար և գուցէ իրանց զրկում են մի ուրիշ եկամուտից, որ կարող էին ունենալ, եթէ իրանց ժամանակը ուրիշ գործով զբաղեցնէին։»

—

ԲԱԳԴԱԻի «Մարդասիրական ընկերութեան» վարչութեան խորհուրդը խնդրում է մեզ յայտնել, որ յունվարի 27-ին ընկերութեան կանոնադրութեան 26-դ յոդուածի համեմատ լինելու է անդամների ընդհանուր ժողով ընկերութեան տան դահլիճում։ Ժողովի նպատակն է քննել ընկերութեան վարչութեան անցեալ տարվայ գործունէութիւնը և ներկայ տարվայ համար նոր կարգադրութիւններ անել։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ. որ յունվարի 7-ին «Քանդած Օջախ» ներկայացման ժամանակ առաջին անգամ անտրակներում անպատեան երաժշտութիւն էր ածում, զինուորական երաժշտութեան տեղ։ Հասարակութիւնը այդ նորութենից շատ գոհ մնաց։

—

Ուրբաթ, յունվարի 18-ին ԹԻՖԼԻՍՈՒՄ մեծ քանակութեամբ ձիւն եկաւ։ Քաղաքի շրջակայ դաշտերի վրա մի արշին բարձրութեամբ ձիւն է դրված։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ հաղորդում են, որ պ. Շաղբաթով մի ատիճանաւորից 150 ռուբլու պահանջ ունէր։ Պարոնը կարգադրել է, որ այդ փողերը յանձնվեն Ալէքսանդրապոլի Առաջնորդարանին։

—

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ. որ դեկտեմբեր ամսի վերջին չաբաթվայ ընթացքում այնտեղ երկու հրէշաւոր սպանութիւններ են պատահել։ Մի երիտասարդ հայ որմնադիր Ալէքսան անունով սպանել է իր այրի խորթ-մորը, խանչալը նրա փորը կոխելով։ Մի թուրք էլ սպանել է իր կնոջը։ Սպանութեան պատճառները դեռ յայտնի չեն։ Երիտասարդ հային բանտարկել են և քննութիւնը սկսված է։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ հաղորդում են, որ չքաւորների համար տեղական հարուստները հաւաքեցին 300 ռուբլի։ Այդ փողերը դաւառապետը բաժանեց աղքատներին, իւրաքանչիւրին 2, 3, 4 ռուբլի տալով։

—

Մեզ գրում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. «Ձեր լրագրի անցեալ 1879 թ. դեկտեմբերի 19-ի № 221 համարում կարդացի, թէ իբր Խալխալ և Ջանուկ գիւղերում մի այրի կին չը կարողանալով կերակրել իր երեխաներին, նրանցը ծախել է։ Այդ լուրը սարսափ դցեց և հէնց այդ պատճառաւ պ. Նստարիուս Մկրտչի Մելիքանցը գնաց Խալխալ և Ջանուկ որ իմանայ թէ ով է արել այդ բանը։ Գործից երևեցաւ, որ այդպիսի բան ոչ մի ժամանակ չէ պատահել։ Զարմանում եմ այդ թերթակցի վրա, որ այնպիսի տեղեկութիւններ է հաղորդում, բայց ինչ կը վերաբերի թանգութեանը, այս մտրիկ օրերս եկել էին մօտակայ տեղերից մարդիկ և գանգատվում են որ հաց չէ ճարվում։ Մանաւանդ որ թէ գիւղերի և թէ իսկ՝ Նախիջևանի ցածր դասը այս բոպէիս էլ նեղութիւն է կրում թանգութեան պատճառով։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ.

Լրագիրները հաղորդում են, որ այս օրերս վախճանվեցաւ հռչակաւոր Ժիւլ-Ֆաւր, որ նշանաւոր դեր է խաղացել Ֆրանսիայի վերջին տարվայ քաղաքական ասպարէզի մէջ։

Կլոդ-Դարբիէլ-Ժիւլ-Ֆաւր վաճառական ծրնողների զաւակ էր։ Նա ծնվել էր Լիոնում 1809-ի մարտի 21-ին։ Նա դեռ նոր էր վերջացրել իր ուսումը Փարիզի իրաւաբանական համալսարանում, երբ ծագեցաւ 1830-ի յեղափոխութիւնը։ Նա մասնակից եղաւ այդ յեղափոխութեանը, և յուլիսի 29-ից սկսած նա մի նամակ հրատարակեց «National» լրագրում, որի մէջ նա պահանջում էր թագաւորութեան կործանումը և մի սահմանադրական իշխանութեան հաստատութիւնը։

Մի քանի ժամանակից յետոյ նա Լիոնի դատաստանական վարչութեան մէջ մի նշանաւոր պաշտօն ստացաւ և այնուհետև սկսեց արձակ համարձակ հանրապետական մտքեր տարածել։ 1831-ի նոյեմբերին նա մասնակից էր պահապան զօրքի և գործաւորների մէջ պատահած արիւնահեղ կռիւին։ 1834-ին նա պաշտպանում էր այն գործաւորներին, որոնք մեղադրվում էին, որ առանց թոյլտուութեան ժողով են կազմել։ Դատարանից դուրս գալուց միջոցին, նա քիչ էր մնում, որ զոհ էր դառնում մի հրացանագրութեան, որը վասլմամբ ուղղված էր դէպի անպաշտպան բազմաբազմութիւնները։ 1835-ին նա Փարիզում պաշտպանեց ապրիլի մեղադրվածներին, և նա իր պաշտպանողական ճառն սկսեց. «Ես հանրապետական եմ» խօսքերով. չը նայելով իր հիւանդ դրութեանը, նա այդ գործը պաշտպանում էր չորս ժամ շարունակ, և այդ պատճառով քիչ էր մնում, որ նրա գլուխը նորից վանգի էր ենթարկվում։

Փետրվարի յեղափոխութեան ժամանակ Ժիւլ-Ֆաւր նշանակվեցաւ ներքին գործերի մինիստրութեան գլխաւոր քարտուղար։ Կարծում են, որ նա է Լէդրիւ-Ռոլլէնին յեղափոխական դարձրել։ Նոյնպէս նրան են վերաբերում այն հռչակաւոր շրջաբերականը, որը պէտք է առաջնորդէր արտակարգ գործակատարներին նրանց անսահման իշխանութեան գործադրութեան մէջ։ Երբ նա 34,260 ձայների բազմութեամբ Լուարի ներկայացուցիչ ընտրվեցաւ, այն ժամանակ, նա հրաժարվեց ներքին գործերի մինիստրութեան մէջ ունեցած պաշտօնից։ Արտաքին գործերի վերաբերութեամբ կազմված մասնաժողովի անդամութեան և պետական քարտուղարի օգնական եղած ժամանակ, նա մեծ եռանդով մասնակցեց ազգային ժողովի աշխատութիւններին։ Մայիսի 15-ին պատահած եղեռնագործութեան առիթով կազմված յանձնաժողովի բարգաւորէօր նշանակվեցաւ Ժիւլ-Ֆաւր, և Լուի-Բլանի գործը մեծ աշխոյժով պաշտպանեց։

Սահմանադրական ժողովի անդամ ընտրվելու ժամանակ, նրան ամենաշատ քուէներ տուին աջակողմեան և ձախակողմեան կուսակցութիւնները. բայց չը նայելով աջակողմեանների համակրութեանը, նա սկսեց պաշտպանել ձախակողմեանների սկզբունքները. և այնուհետև գրեթէ բոլոր հարցերի մէջ բուէարկում էր ձախակողմեանների հետ։ Օրինակ նա ձախակողմեանների հետ քուէարկեց յօգուտ լրագիրների երաշխաւորութեան, մահուան պատժի ոչնչացնելուն և հետզհետէ աճող հարկերի թեթևացնելուն։ Մի քանի հարցերում նա մինչև անգամ չէզոք մնաց։ իսկ մի քանի նշանաւոր հարցերում էլ նրա հրաժարականը արդելք եղաւ մասնակցելու։

Դեկտեմբերի 10-ի ընտրութիւնից յետոյ, Ժիւլ-Ֆաւր սկսեց հետզհետէ աւելի ու աւելի զգալի կերպով ընդդիմադրութիւն գործել նախագահ Լուի-Նապոլեոնի աւելացնելու ռազմական ինտրատական արշաւանքին յատկացրած 12,000,000 ֆրանկի հարցը քուէարկելուց յետոյ, նա դատարանի առաջ ամենամեծ եռանդով պախարակեց այդ արշաւանքին տուած ուղղութիւնը, և պահանջեց, որ նախագահը իր մինիստրները պատասխանատու լինեն իրանց բռնած ընթացքին. մի անաջող ընտրութենից յետոյ, նա ռամիկապետական առաջնորդների թիւն անցաւ. իսկ Լէդրիւ-Ռոլլէնի փախուստից յետոյ նա իր վրա ընդունեց Մօնտայնի հանրութեան պաշտօնը։ Նրա խօսած ճառերի մէջ ամենանշանաւորներն են, նրանք, որոնց մէջ նա պահանջում էր լրագրութեան երաշխաւորութեան վերահաստատութիւնը, հերքում էր Ֆրանդենի առաջարկութիւնը, և մերկացնում էր Հաւմի արշաւանքի գործիքներին ու հեղինակներին։

Դեկտեմբերի 2-ի պետական հարուածը վեց տարով հեռացրեց Ժիւլ-Ֆաւրին քաղաքական ասպարէզից։ Երբ նրան Լուարի և Ռանի գլխաւոր խորհրդարանի անդամ ընտրեցին, նա հրաժարվեց նոր սահմանադրութեան պահանջած երդումից, և այդ պատճառով նա սահմանափակեց իր գործունէութեան ասպարէզը իր փաստաբանութեան պաշտօնով։ Նա ձայների ահագին առաւելութեամբ Փարիզի կարդապահական խորհրդարանի անդամ ընտրվեցաւ։ 1857-ին ընդդիմադրական կուսակցութիւնը զուր աշխատեց պաշտպանել Լիոնում նրա կանդիդատութիւնը օրէնսդրական ժողովի մէջ. ձայների ահագին առաւելութիւնը քուէարկեց նրա հակառակ, բայց հետևեալ տարին Փարիզի մասնաւոր ընտրութիւններից մէկում նրան այնու ամենայնիւ անդամ ընտրեցին մի և նոյն օրէնսդրական ժողովի մէջ. պէտք չէ մոռանալ, որ այդ միջոցները նրա անունը աստիկ հռչակվել էր Օրլէանի գործի վերաբերութեամբ, որտեղ նա պաշտպանում էր գլխաւոր մեղադրվածի գործը։

Օրէնսդրական ժողովի նիստերում Ժիւլ-Ֆաւր մի քանի անգամ ատենախօսութիւններ արաւ, և իր ճառերի մէջ նա խօսեց գլխաւորապէս ներքին և արտաքին քաղաքականութեան մասին, մանաւանդ 1859-ին նա սաստիկ յարձակվեցաւ իտալական արշաւանքի պատճառ եղողների վրա։

Նա հինգ անուանված՝ փոքրիկ ընդդիմադրական կուսակցութեան ամենանշանաւոր առաջնորդներից մէկն էր. այդ փոքրիկ կուսակցութիւնը մեծ եռանդով պաշտպանում էր բոլոր այն հարցերը, որոնց կառավարութիւնն ու ժողովի ահագին մեծամասնութիւնն անդադար ճնշում-կործանում էին։ Երբև հռետոր նա ստիպվեցաւ դէմ դնել ահագին փոքրիկների։ 1863-ին Ժիւլ-Ֆաւր նորից ընտրվեցաւ Փարիզի ընդդիմադրական կուսակցութեան պատգամաւոր. 27,798 քուէարկողներից նա 18,744 ձայն ստացաւ։ Այդ մի և նոյն ժամանակ նրան ընտրեցին նոյնպէս և Լիոնում։ Այնի կուսակցութեան մէջ նրա հակառակորդն էր Լէվի-Ֆրեդերիկ, իսկ Բանի կուսակցութեան մէջ նրան մրցողն էր Լաֆիօրէաս։ Նա ընդունեց Բանի պատգամաւորութիւնը։

Ժիւլ-Ֆաւր մնաց նոր ժողովում իբրև ռամկապետական կուսակցութեան առաջնորդ, մի և նոյն ժամանակ նա Թիէրի հետ ընդդիմադրական կուսակցութեան ամենասարսափելի հռետորներից մէկն էր համարվում։ Պէտք է խոստովանած, որ դրանք միակ հռետորներն էին, որոնց ամենքից շատ էին լսում։ Նրա ճառերից շատերը, բացի այն, որ ահագին ազդեցութիւն էին բարձրացնում պարլամենտական շրջաններում, նրանք կարդացվում էին նոյնպէս և երկրի մէջ ամենամեծ հետաքրքրութեամբ, և ամենամեծ ուշադրութեամբ։

(Կը շարունակվի)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ 17-ին գիշերը Սապէօրնի փողոցում № 10 տան № 9 սենեակներում գտնված է գաղտնի տպարան։ Նրա մէջ գտնվող հինգ անձինքը, որոնցից երեքը տղամարդիկ, իսկ երկուքը կանայք էին, գէնքով ընդդիմադրութիւն գործեցին, ժանդարմների և պոլիսականների վրա ատրճանակներ արձակեցին, և վիրաւորեցին պրիստաւի օգնականի ձեռքը. չորսին կալանաւորեցին, իսկ հինգերորդը բէվոլվերով արձակեց իր քունքին և սպանեց իրան. գտնված են սպարանական գործիքներ, «Народная Воля» լրագրի ահագին քանակութիւն, կեղծ ինքնքերի տուներ, պատրաստված կեղծ վկայագրեր, թղթեր, ձայթող նիւթեր և դրան վերաբերեալ զանազան գործիքներ։

ԿԱՆՆ, 19/31 յունվարի։ Այսօր Կայսրուհին ուղևորվում է Ռուսաստան։

ԲԵՐԼԻՆ, 18/30 յունվարի։ Երէկ գերմանական թագաժառանգ իշխանը ուղևորվեց Իտալիա։ Ճանապարհ ընկնելուց առաջ ծրագրված գինուորագրութեան վերաբերութեամբ իշխանը երկար խօսակցութիւն ունեցաւ Բիսմարկի հետ։ Ասում են, որ իշխանը համակրում է Բիսմարկի և Մոլտկէի ծրագիրներին, և համաձայնում է հօրը համաձայնել նրանց իրագործվելուն։

ԿԱՆՆ, 17/29 յունվարի։ Կայսրուհին օրը բաւականացուցիչ կերպով անցկացրեց. գիշերը լաւ քնեց, գլխէ չը հազաց. քրտինքը սակաւ էր. վատ չը ճաշեց, միայն նեղանում էր սրտի բաբախումից. ջերմութեան աստիճանը երեկոյեան 38 էր, իսկ երակի զարկը 110. առաւօտը ջերմութեան աստիճանը 37,6 էր, իսկ երակի զարկը 116։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Կովկասեան փօստային շրջանի մի քանի հիմնարկութիւնների շտատների կարգադրութեան համար Բարձրագոյն հրաման կայացաւ։

ՊՐԻՋԼԻՆԳ, 17/29 յունվարի։ Մուխտար փաշայի և ալբանական դաշնակցութեան ներկայացուցիչների մէջ մի խռովութիւն ծագեց, այն պատճառով, որ Մուխտարը թոյլ չը տուեց ալբանական պատգամաւորութեանը Կ. Պոլիս գնալու։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը յունվարի 20-ին հաղորդում է հետևեալը. Ճանապարհորդութեան ժամանակ Կայսրուհու ինքնազգացութիւնը լաւացել է, ընդհանութիւնն աւելի ազատ է, քունն աւելի հանգիստ. հազը սակաւացել է, քրտինքը շատ չափաւոր է. ախորժակը միջակ է, սրտի բաբախումը քիչ է նեղացնում. ջերմութեան աստիճանը երեկոյեան 37,9 էր, իսկ երակի զարկը 116. առաւօտեան ջերմութեան աստիճանը 37,4 էր, իսկ երակի զարկը 108։ Մինիստր Մակով որոշեց, որ «Голосъ» լրագրում մի ամսով արգելվի մասնաւոր յայտարարութիւնների տպագրելը։

Կ. ՊՈԼԻՍ, 19/31 յունվարի։ «Голосъ» լրագրին հեռագրում են, որ սովն այնտեղ սարսափելի դրութեան է հասել. ստամբուլցիները որսում են Բայազէտի մէջէն սրբազան աղաւնիները։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ